

... ՀՈԳԻՍ ՍԵՂԱՆ ՄԸՆ Է ԲԱՑ

To Mr. Paul Ledermann

Of the Cent. Laboratory, UNRWA, Jerusalem

Իմ եղբայրներ հեռաւոր, ցրւած հիմա ամէն տեղ,
Ձեզի համար կը գրեմ ես այս տողերը ահա,
Բազմակրօն ընկերներս, բազմալեզու, բազմացեղ,
Կ'ուզէի որ ամենուդ բաշխուէր զերթ մանանայ:

Կը քրդաւորեմ յաւերժու էջերը երբ մէկ առ մէկ,
(Անուններն իսկ շատերուդ հիմա մոռցած ա՛լ արդէն).
Կարծես դարեր են անցեր, կարծես ըլլար դեռ երէկ,
Երբ հանդիպած ենք բախտով, յետոյ զատուած ալ բախտէն:

Վաղը գուցէ հանդիպիմ ձեզմէ մէկուն ես փողոցն,
Անցնիմ ֆուլէն ես որպէս թէ զինքը չեմ հանչըցած,
Գուցէ այնպէս մը ցուցնեմ ք'իրեն համար սիրս է զոց,
Նոյնացեր էք սիրոյս մէջ սակայն ամէնֆոյ եւ Աստուած:

Յիշատակին՝ ամենուդ՝ հոգիս սեղան մըն է բաց,
Ժառանգութիւնըս միակ իմ պապերէս մընացած:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

